ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
09 ՀՈՒՆԻՍԻ 2021թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Վռամ Գյուլզադյանը, Արմեն Մարիկյանը, Վահե Նալբանդյանը, Աիդա Սարգսյանը, Ստեփան Օհանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Ռաֆիկ Վարդանյան, Վրույր Այվազյան, Կարեն Զալինյան, Հակոբ Վարդանյան, Աբգար Մագթաղյան, Աշոտ Մեսրոպյան, Գագիկ Ղարաջյան, Սուրեն Ավետիսյան, Գագիկ Ներկարարյան, Արեն Ֆրանգյան, Ռոզա Մատինյան, Հերբերտ Մաթեվոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռաֆիկ Վարդանյանը

Նիստը արձանագրում էր ՝ աշխատակազմի քարտուղար Թ. Գրիգորյանը

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2021թ. հունիսի 09-ի թիվ 05 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱԳԻԿ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.
Հաստատել 2021թ. տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից
ա/ նորածիններ ունեցող ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 01 հավելվածի,
բ/ հարազատին կորցրած ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 02 հավելվածի.
գ/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն թիվ 03 հավելվածի
դ/ Գյուլագարակ համայնքի բնակավայրերի դպրոցների շրջանավարտներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 04 հավելվածի
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 07-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
Գյուլագարակ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 22-ի «Գյուլագարակ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 07-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Լսեցին
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ՝ ԿՈՎԻԴ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎՐՈՒՅՐ ԱՅՎԱԶՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1. Տալ համաձայնություն Գյուլագարակ համայնքին մասնակցելու Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ համավարակով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու

և այդ նպատակով Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համայնքներում տնտեսական զարգացմանն ուղղված փոքր և միջին ծրագրերը իրականացնելու նպատակով համայնքներին տրամադրվող դրամաշնորհ ստանալու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՐԹԱՆ, ՎԱՐԴԱԲԼՈՒՐ, ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱԳԻԿ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
Համայնքի բյուջեի 4637 հոդվածից Գյուլագարակ համայնքի ներքոնշյալ գյուղերի դպրոցներին տրամադրել 1550000 /մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, համաձայն ժամանակացույցի. Կուրթանի միջնակարգ դպրոցին 800000 /ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ, Վարդաբլուրի միջնակարգ դպրոցին 450000/չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, Գարգառի միջնակարգ դպրոցին 300000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Լսեցին
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ՀԵՐԲԵՐՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը, համայնքի բնակիչների դիմումները՝ հողի հարկի տույժերը զիջելու մասին, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Կիրառել հողի հարկի գոյացած տույժերի արտոնություններ կուտակված ապառքը ամբողջությամբ և միանգամից մարած բնակիչներին համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ՌՈԶԱ ՄԱՏԻՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով՝ Գյուլագարակ համայնքի ավագանու կողմից 2017 թ. ընդունված «Գյուլագարակ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ» թիվ 10-Ա որոշման պահանջները, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը» համաձայն թիվ1 հավելվածի: 2.Սահմանել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն թիվ2 հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԿՏԻՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ԶԱՐԳԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԶԱ ՄԱՏԻՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը և 13-րդ հոդվածի 12-րդ կետը, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի «Ակտիվ երիտասարդ, զարգացող համայնք» ծրագրի կողմից վեր հանված համայնքային խնդիրներին հետագայում ընթացք տալուն:

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՆ ՖՐԱՆԳՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.
1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը՝ ա/ աճուրդ-վաճառքով օտարելուն՝
1/ 1,25331 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, խոտհարք գործառնական նշանակության, ծածկագիր 06-029-0136-0012, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 650000 /վեց հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ,
2/ 0,017076 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, ծածկագիր 06-027-0076-0036, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 60000/վաթսուն հազար / ՀՀ դրամ,
3/ 06-029-0072-0005 ծածկագիրից տարանջատված 0.07272 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդորքօգտագործման և այլ արտադրական օբյոկտների, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 245000 /երկու հարյուր քառասունհինգ հազար / ՀՀ դրամ,
4/06-029-0072-0007 ծածկագիրից տարանջատված 0.07651 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդորքօգտագործման և այլ արտադրական օբյոկտների, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 257900 /երկու հարյուր հիսունյոթ հազար ինը հարյուր / ՀՀ դրամ,
5/ 06-027-0121-0003 կադաստրային ծածկագրի 1,07 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, խոտհարք գործառնական նշանակության, , 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 923000 /ինը հարյուր քսաներեք հազար / ՀՀ դրամ,
6/ 0.85798 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, վարելահող գործառնական նշանակության, ծածկագիր 06-027-0142-0001, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 1014000 /մեկ միլիոն տասնչորս հազար / ՀՀ դրամ,
7/0,10446 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, ծածկագիր 06-027-0076-0036, 1/մեկ/ լոտ, մեկնարկային գինը 352000/երեք հարյուր հիսուներկու հազար / ՀՀ դրամ,
8/06-029-0072-0023 ծածկագիրի 0.28374 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդորքօգտագործման և այլ արտադրական օբյոկտների, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 965000/ինը հարյուր վաթսունհինգ հազար / ՀՀ դրամ,
9/ 06-104-0028-0005 ծածկագիրի 0.00979 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 50000/հիսուն հազար / ՀՀ դրամ,
10/ 06-062-0005-0003 ծածկագիրի 0.14002 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդորքօգտագործման և այլ արտադրական օբյոկտների, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 310000 /երեք հարյուր տասը հազար / ՀՀ դրամ,
բ/Վարձակալության տալուն՝
1. 06-027-0119-0001 կադաստրային ծածկագրից 0,29614 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, 25 տարի

ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 6000 / վեց հազար/ ՀՀ դրամ,
2. 3,598266 հա հողամասը,նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը ՝ վարելահող, ծածկագիրը 06-104-0114-0001, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով մեկնարկային գինը 36000/երեսունվեց հազար / ՀՀ դրամ:
3. 0.738219 հա հողամասը, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը ՝ խոտհարք, ծածկագիրը 06-062-0112-0007, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով մեկնարկային գինը 9000 /ինը հազար / ՀՀ դրամ:
4. 0.18894 հա հողամասը, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը ՝ այլ հողատեսք, ծածկագիրը 06-093-0128-0002, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով մեկնարկային գինը 4000 /չորս հազար / ՀՀ դրամ:
5. 06-093-0116-0032 կադաստրային ծածկագրի 1,37892 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 14000 / տասնչորս հազար/ ՀՀ դրամ,
6. 06-027-0119-0002 կադաստրային ծածկագրի 0,109424 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 4000 / չորս հազար/ ՀՀ դրամ,
7. 06-057-0113-0020 կադաստրային ծածկագրի 0,183273 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ հնդավոր, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 4000 / չորս հազար/ ՀՀ դրամ,
8.06-062-0013-0044 կադաստրային ծածկագրի 0,5125 հա ջրային նպատակային նշանակության, լիճ գործառնական նշանակության հողամասը, 25 տարի ժամկետով, 1/ մեկ/ լոտով, մեկնարկային գինը 14000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ,
9. 06-057-0100-0043 կադաստրային ծածկագրից 0,15686 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ Խոտհարք, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 2500 / երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,
10. 06-057-0100-0043 կադաստրային ծածկագրից 0,15745 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ Խոտհարք, 25 տարի ժամկետով, 1/մեկ/ լոտով, մեկնարկային գինը 2500 / երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՆ ՖՐԱՆԳՅԱՆ/

Հիմք ընդունելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 481-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերը, 76 –րդ հոդվածը, 60-րդ հոդվածը, ՀՀ Կառավարության 12.04.2021 թ.-ի թիվ 286 որոշման 8-րդ գլխի 46.2 հոդվածը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.
Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու.
1. 06-029-0560-0003 կադաստրային ծածկագրի 0,00198 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման, 25/քսանհինգ/ տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով, մեկնարկային գինը 5000/ հինգ հազար/ դրամ:
2. 06-029-0560-0004 կադաստրային ծածկագրի 0,00198 հա հողամասերը՝ նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման, 25/քսանհինգ/ տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրել, մեկնարկային գինը 5000/ հինգ հազար/ դրամ:

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ԱՐԵՆ ՖՐԱՆԳՅԱՆ/

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որԳյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի վարչական սահմանուն գտնվող 06-104-0019-0002 կադաստրային ծածկագրի 0,08214 համակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,01644 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասը, 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,05537 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասը և 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,01895 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասը այլ անձանց պատկանելու վերաբերյալ իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ գոյություն չունի և այն Հայաստանի հանրապետության կառավարության 04.06.2005 թ. N 1442-ն որոշմամբ չի ընդգրկվել համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 59-րդ հոդվածներով, 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանի 2-րդ գլխի 5-րդ կետով կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է

1.Գյուլագարակ համայնքի 06-104-0019-0002 կադաստրային ծածկագրի 0,08214հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի, 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,01644 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասի, 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,05537 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասի և 06-104-0028-0001 կադաստրային ծածկագրի 0,01895 հա մակերեսով բնակավայրի նպատակային հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ ճանաչել համայնքի սեփականության իրավունքը և միացնել համայնքի հողային ֆոնդին: ,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉ 2-ՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ՎՐՈՒՅՐ ԱՅՎԱԶՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Գյուլագարակ համայնքին մասնակցելու Հայաստանի տարածքային հիմնադրամի սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի բաղադրիչ 2-ով հայտարարված դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Նիստն արձանագրեց՝ Թ. Գրիգորյանը